

# ՄԵՆՔ ԱՄԷՆ ԻՆՉ ԳԻՏԵՆՔ, ՄԵ՛ՆՔ ԿԸ ԴԱՍԱԻՈՐԵՆՔ... ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՉԻ... ՍՓԻԻՌՔՆ ԱԼ ՄԵՉԻ

Հայաստանի Յրդ Հանրապետության ստեղծումին առաջին օրին սկսեալ, ամէն անգամ երբ կը դիմենք մեր հայրենի փառապահ՝ ստեղծութեան որեւէ իշխանաւորի՝ յայտնելով մեր ցանկութիւնը օգտակար դառնալու Մայր Հայրենիքի վերականգնման եւ բարգաւաճման ծրագիրներուն՝ կը ստանանք հետեւեալ "չոր" յանկերգ-պատասխանը. "Մենք ամէն ինչ գիտենք, ամէն ինչ մե՛նք կը դասաւորենք...":

Այս ամենագէտ-ամենատգէտ "չինովնիկ" անձնաւորութիւնները՝ ուղղակի ժառանգորդները պրեժնետեան- կորպաչովեան "լճացման" ու "փերեսթոյքայի" բախտախնդիրներուն, որոնք ովկիանոսէ ովկիանոս, լեռնաշղթայէ լեռնաշղթայ տարածուող, անգին հարստութիւններ, 11000 ballistic հրթիռներով պիտուած Խ. Միութիւնը կործանեցին, միլիոնաւոր մարդիկ խայտառակ կացութեան մատնելով "փերիշան" ըրին՝ իրենց "Մենք ամէն ինչ գիտենք"ով:

Այո՛, ինչպէս ներգաղթի տարիներուն, այնպէս ալ անկախութենէն ետք՝ Հայաստանի որոշ ղեկավարներուն համար՝ ամէն "իսկական" սփիւռքահայ, որ իր ապագան կործանած է Մայր Հայրենիքին ծառայութեան մէջ՝ "պոտենցիալ Շփիոն"ներ էին, որպէս հետեւողութիւն Սթալին-Պերիլայի տարիներուն Խորհրդային Միութեան ժողովուրդներուն գլխու փորձանք "Շմերշ" ("Մենք Լրտեսներուն") յատուկ ծառայութեանց կապ-մակերպութեամբ՝ որուն պատճառով միլիոնաւոր մարդիկ իրենք պիտենք գտան անծայրածիր Սիպերիոյ գորշ թէ սպիտակ արջերու մօտ՝ յաճախ կեր դառնալով գայլերու վոհմակներուն կամ համաճարակներուն... Իսկ մեր օրերուն, Հայաստանի որոշ իշխանաւորներ արդարացիօրէն քննադատած Սփիւռքահայ երիտասարդներ, ճաշակեցին նաեւ... "հայկական" բանտերու եւ տանջարաններու տառապանքը, զրպարտութիւններն ու կաշառուած դատաւորներու "սարքուած" ամբաստանութիւնները: Այսինքն՝ անանկացած Սփիւռքի լուծմաներով հաւաքուած օգնութիւնները, Եւրոմիութեան թէ Ա.Մ.Ն.-ի, Ռուսիոյ ուղարկած միլիոնաւոր եւրո-տոլարները, համաշխարհային դրամատան թէ այլ ֆինանսական կապմակերպութիւններու, կապմակերպուած քրէական աշխարհի ("Մաֆիա") շրջանառութեան դրուած "ստուերային" հսկայական գումարները՝ պատճառ դարձան որ երէկի "յեղափոխական-փրկիչ" ղեկավարներ՝ այսօր մի քանի միլիառ տոլարի հասնող հարստութիւն դիպեն, "Մարտ 1"եր կապմակերպեն, Հայաստանի ժողովուրդին մեծ

մասը հարցաքննութեան կանչեն ինչպէս 1996 թուին, այնպէս ալ 2008 թ.ին՝ միայն թէ մնան կեղծիքով եւ անբարոյականութեամբ, հերոսներու արիւնով ձեռք բերուած "աթոռ"ներու վրայ:

1946-1964 թուականներուն հայրենադարձուած, այսինքն՝ հայրենիքի կարօտով տոչորուած Սփիւռքի բիրաւոր հայրենասէրներ՝ "ախպար" ու "դաշնակ" յորջորջուած տասնամեակներ շարունակ՝ ափ ի բերան մնացին այն վանգուածային արտագաղթի երեւոյթներէն՝ երբ Խ. Միութեան փլուզումէն ետք, նախկին "կոմսոմոլ"ներ ու "պարտիական"ներ, "մատերիալ" գրողներ ու զրպարտիչներ՝ իրենց շունչը առին "իմպերիալիստական" Ամերիկայի անդաստաններուն, Արեւմտեան թէ Արեւելեան Եւրոպայի ոստաններուն մէջ՝ նաեւ "թափուելով" Պէյրութ: Ամէն տեղ, պէտք է որ հայկական գաղթօճախները իրենց անթիւ, անհամար արուեստագէտներուն, երաժիշտներուն, պարող-պարուհիներուն համար "տեղ բանային", որպէսզի կարողանային այստեղ ալ սփիւռքահայութիւնը պառակտելու, քարուքանդ ընելու իրենց սեւ գործը շարունակել: Ամէն տեղ վէճ ու կռիւ, փանջունիական արտայայտութիւններ, ապերախտութեան եւ անշնորհակալութեան բազմաթիւ տեսարաններ: Մինչ քամելով Սփիւռքի վերջին լուծման, անվերջ լալով ու կուրծք ծեծելով հանդերձ, անտնք ոչ մէկ ապրու դեր վերապահեցին ոեւէ սփիւռքահայու, այն հայրենիքին մէջ որ այսօր պատանդ դարձած է խումբ մը աւապակաբարոյ բախտախնդիրներու ձեռքը:

Աւելին, ստեղծելով "հայաստանցիներու Սփիւռք" մը, հլու-հնապանդ Երեւանի թէ Մոսկուայի իրենց տէրերուն "սփիւռքահայ" քանի մը մանկալիկներու՝ անտնք արդէն իսկ կը յայտարարեն բարձրաձայն. (Հայրենիքը մեզի, Սփիւռքն ալ մեզի...):

Արդիւնքը՝ հայ-թրքական խայտառակ համաձայնագիրներու "փրոթոքով"ներ, սփիւռքահայերու ցասման աննախընթաց պոռթկում, խայտառակ դիւանագիտական քաշքշուք, մինչ Հայաստանի գոռոյ արտաքին գործոց նախարարը "մատ թափ կու տար", թէ՛ "ի՞նչ էք ուլում, ձեր պատճառով Թուրքիոյ հետ սահմանները փա՞կ պահենք եւ սոված մեռնե՞նք...":

Իսկ մենք հարց կու տանք այս "ներքին թուրքերուն", քանի՞ միլիառատէր կայ Հայաստանի մէջ: Քանի՞ քապարէ, անառակութեանց տուն ու դղեակ, իսկ խեղճ ժողովուրդին երեսը նայողը ո՞վ է: